

**ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ  
ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ**

**9-րդ դասարան**

1. Հայերենի I ուսուցիչը՝ Օշականի սուրբ ննջեցյալը՝ Մեսրոպ Մաշտոցը, բացառիկ դեր է ունեցել հայ ժողովրդի ետքրիստոնեական շրջանի պատմության մեջ: Նրա կերպարը՝ իմաստավորված աստվածային հրաշքի հայտնությամբ, դարձավ հայ ժողովրդի երթի առաջնորդ-խորհրդանշանը, դարձավ հայերիս փրկության անբեկանելի կովանը, պատմության քառուղիների անշեջ փարոսը: Հայ գրերի գյուտով Մաշտոցը իր հայրենիքին տվեց հավերժության այցեքարտ: Նա ապացուցեց «որ այնտեղ է լույս սխրանքն սկսվում, որ վերջանում է ամեն մի հնար», իսկ որ IV դարավերջին և V դարասկզբին Հայաստանի համար վերջացել էին բոլոր հնարները, ակնհայտ է մեր պատմության ամենասարսափելի էջերից՝ 387 և 428 թվականներից: Վերջացավ հայոց թագավորությունը . Հայաստանը բաժանվեց Արևմտյանի և Արևելյանի: Եվ Մաշտոցը գործեց իր աներևակայելի սխրանքը՝ հայոց այբուբենի գյուտը: Նա դարձավ Երկրորդ Լուսավորիչ. հայ ժողովուրդն առաջին անգամ մայրենի լեզվով խոսեց իր Աստծո հետ: Բացվում են առաջին դպոցները, նախ՝ Վաղարշապատում՝ Մայր տաճարին կից, ապա՝ երկրի բոլոր մասերում: Նա կրթում է աշակերտների, որոնց մեջ էին Մովսես Խորենացին, Եղիշեն, Կորյունը, Վահան Ամատունին, Վարդան Մամիկոնյանը, Եզնիկ Կողբացին, Ղևոնդ երեց Վահանդեցին, Հովնան Եկեղեցացին , Հովսեփ Պաղնացին , Հմայակ Մամիկոնյանը և այլք: Ըստ որոշ տվյալների՝ Մաշտոցի առաջին սերնդի աշակերտների թիվը հասնում էր վեց տասնյակի: Մաշտոցի աշակերտներից նրա մասին առաջին վարքագրությունը գրել է Կորյունը՝ Մաշտոցի առաջին աշակերտներից կրտսերը . գրել է հայոց վեհափառի տեղապահ Հովսեփ Վայոցձորեցու պատվերով: Մաշտոց նշանակում է գերագույն մարդ, այսինքն՝ աստվածացված: Կորյունի «Վարք Մաշտոցի» մատյանը հայերենով գրված առաջին ինքնուրույն գիրքն է: Մաշտոցի մասին գրել է նաև նրա հանճարեղ աշակերտը՝ Քերթոզահայրը: Նա նույապես ներկայացնում է Մաշտոցի կենսագրությունը, Դանիելյան գրերի պատմությունը, Մեսրոպյան այբուբենի ստեղծումը, թարգմանական և գրական գործը: Խորենացին գրում է. «Նա ոչ թե սովորեցնում էր որպես արվեստ , այլ աշակերտներին կարծես հոգի էր ներշնչում »: Մաշտոցի մասին գրել են ոչ միայն իր աշակերտները, այլև հետագա դարերի բոլոր պատմիչներն ու գրողները, նրա կերպարին անդրադարձել են բազում բանաստեղծներ, գրականագետներ, պատմաբաններ:

Մաշտոցը մեր ամենօրյա աղոթքն է, մեր անկապտելի հարստությունը. վկան՝ Սուրբ թարգմանչաց տոնը, որ դարեր շարունակ նշում է հայոց եկեղեցին ու հայ ժողովուրդը՝ ի դեմս առաջին հերթին սուրբ Մեսրոպի և սուրբ Սահակի, ովքեր Մաշտոցյան այբուբենով թարգմանեցին գրքերի գիրքը՝ «Աստվածաշունչը»՝ թարգմանությունների թագուհին:

2. Հայ գրականության մշտահմա աղամանդներից է հայ հին բանահյուսությունը: Հատկապես բանահյուսական երգերի ու ասքերի միջոցով ենք ճանաչում ինքներս մեզ, մեր էությունը, մեր անցած ճանապարհը: Իր անցած ճանապարհին մեր ժողովուրդը բազում փորձությունների ու հրաշալի առաքինությունների միջով է անցել՝ հետագա սերունդներին ավանդելով առասպելներ ու վիպերգեր, որոնք խորությամբ արտահայտում են նրա ազգային բնավորությունը՝ ազատասիրությունը, հայրենասիրությունը, անձնագոհությունն ու բարությունը, արարելու կամքը և այլ գեղեցիկ հատկանիշներ:

Այս հատկանիշները լավագույնս արտահայտվել են «Վահագնի ծնունդը» առասպելում, «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տիգրան և Աժդահակ», «Արտաշես և Արտավազդ» և այլ վիպերգերում:

«Տիգրան և Աժդահակ» վիպերգում առաջին անգամ գծագրվում է հայ կնոջ կերպարը: Այս վիպերգում գործում են 3 կին հերոսներ՝ Տիգրանուհին՝ Տիգրանի քույրը, Զարուհին՝ Տիգրանի կինը՝ հայոց թագուհին և Մարերի թագավոր Աժդահակի կինը՝ Անույշը:

Տիգրանուհին Աժդահակի կինն է դարձել վերջինիս վախի և խորամանկության արդյունքում: Աժդահակը խնդրել է Տիգրանուհու ձեռքը իր տեսած սարսափելի երազից հետո՝ զգուշանալով Տիգրանի հզորությունից: Բայց Տիգրանուհին՝ «խորագետ գեղեցկուհին», շատ լավ է հասկանում Աժդահակի մտադրությունը և սիրալիր խոսքերով է պատասխանում Աժդահակի նախազգուշացումներին և սպառնալիքներին ու մտերիմների միջոցով տեղեկացնում է եղբորը՝ պատրաստվող դավադրության մասին:

Տիգրանուհին սոսկ կնոջ կերպար չէ, նա առաջին հերթին հայ կինն է, որն իր հոգևոր կարողություններով, իր խելքով և հայրենասիրությամբ չի զիջում տղամարդկանց. նրանց հետ համահավասար կռվում է հայրենիքի թշնամիների դեմ և հաղթանակով դուրս գալիս այդ կռվից:

Երբ Աժդահակը նրան սպառնում է, որ «խայտառակ կործանում է սպասվում», եթե չկատարի իր կամքը, նա, կյանքը վտանգելով, Տիգրանին հայտնում է խարդավանքի մասին:

Տիգրանուհուն վերաբերող դրվագը վիպերգի ամենախորիմաստներից է, քանի որ անձնական, կենցաղային հարաբերությունները բարձրացվել են պետական շահերի մակարդակին: Անուրանալի է Տիգրանուհու անձնուրացությունը Տիգրանի հաղթանակի գործում: Նա այստեղ հանդես է գալիս որպես խորագետ ու շրջահայաց

կին, որը հեռու է վախկոտությունից, փառասիրությունից: Նրա՝ հայրենիքի սիրով տոգորված ոգին ծնկի է բերում ժողովրդի թշնամուն:

Նա մեր առաջին պատմագեղարվեստական կերպարն է, որի սխրանքը կրկնվեց մեր ժողովրդի պատմության ճակատագրական բոլոր կռիվներում՝ Ավարայր,

Սարդարապատ, Արցախ:

Այսօր էլ հայ ժողովուրդը ունի բազում Տիգրանուհիներ, որոնք հայրենասիրությամբ չեն զիջում իր անվեհեր հայրենասիրությամբ հայտնի «խորագետ գեղեցկուհի» հայուհուն:

3. «Էպոսը ժողովրդի պատմական բանաստեղծությունն է, կամ բանաստեղծական պատմությունը»: Գրականագետ Մանուկ Աբեղյանի այս դիպուկ բնորոշումը լավագույնս է բնորոշում էպոսի ծագումնաբանությունը, ստեղծման անհրաժեշտությունը, արժարժված հարցերի արդիականությունը:

Աշխարհի ցանկացած ժողովուրդ ստեղծել է իր բանաստեղծական պատմությունը պատմական շատ կարևոր մի ժամանակահատվածում՝ ներառելով իր կազմավորման և զարգացման ընթացքը մինչ որոշակի մի ժամանակշրջան, երբ այն ամբողջացել է՝ արտահայտելով ժողովրդի նվիրական հույզերը, անկախ ու ազատ երկիր ունենալու իրավունքն ու կարողությունը, խաղաղ ապրելու և ստեղծագործ աշխատանքով իր երկիրը շենացնելու երազանքը: Բացառություն չէ նաև հայ ժողովրդի անգուգական դյուցազներգությունը, որը հյուսվել է 7-10 դարերում՝ արաբական արշավանքների ժամանակ, բայց արմատները մխրձված են անհիշելի ժամանակներում, երբ մարդը դեռ նոր էր մոտենում երկրավոր մարդու կերպարանքին:

Մեր էպոսը տարբեր գավառների բանասացների մոտ պատմվել է տարբեր ձևերով և անվանումներով, այդ պատճառով էլ այն ունի 60- ից ավելի պատում և մի քանի անվանում՝ «Մասնա ծոեր», «Ջոջանց տուն», «Քաջանց տուն», և միայն 1939-ին՝ էպոսի 1000-ամյակի օրերին, այն անվանվեց «Մասունցի Դավիթ»՝ դառնալով համահավաք տեքստ: Մեծ երախտավորներ Մանուկ Աբեղյանը, Գևորգ Աբովը և Արամ Ղանալանյանը, ինսամքով ուսումնասիրելով բազում պատումներ, հայ ընթերցողի սեղանին դրեցին մեր պատմության անգուգական բանաստեղծությունը:

Համահավաք տեքստը կոչվեց «Մասունցի Դավիթ», քանի որ մեր ժողովուրդը այս հերոսի մեջ է խտացրել իր բոլոր երազանքները, իր բնավորության լավագույն գծերը՝ հայրենապաշտությունը, մեծահոգությունը, ուղղամտությունը, պարզությունը, անկեղծությունը, ներողամտությունը, երախտապարտությունը և այլն: Բայց մեր ժողովուրդը իր սիրելի հերոսին չի դարձրել անթերի մեկը. նա նշել է նաև նրա մարդկային թերությունները՝ միամտությունը, նեղացկոտությունը, դյուրաբորբոքությունը և այլ ներելի «մեղքեր»: Հենց «Դավիթի մասին ասքն է կազմում մեր էպոսի միջուկը» հավաստում է էպոսագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին:

«Մասունցի Դավիթ» էպոսը մշտապես եղել է մեր գրողների ներշնչարանը և մշտապես զբաղեցրել է նրանց: Այդ պատճառով մեր գրողները շատերն են անդրադարձել և մշակել

տարբեր ճյուղեր. Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Եղիշե Չարենց, Նաիրի Չարյան, Կոստան Չարյան, Դանիլ Վարուժան և այլք:

Լավագույնը Մեծ լոռեցու մշակումն է: 1902-ին Հովհաննես Թումանյանը գրեց իր «Մասուցի Դավիթ» պոեմը՝ մշակելով մեր էպոսի ամենապարփակ `3-րդ ճյուղը՝ «Մասունցի Դավիթը»: Պոեմում հեղինակը քննում է հայրենասիրության, մարդասիրության, ազատասիրության, խաղաղապաշտության, երախտագիտության, գլխարտության հարցեր:

4. Մուրացանը՝ Գրիգոր տեր- Հովհաննիսյանը հայ գրականության նվիրական անուններից է, տաղանդաշատ ու բազմաբեղուն գրիչ, ում ստեղծագործությունները մինչ օրս ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ և անթաքույց հիացմունքով: Ծնվել և մանկությունն ու պատանեկությունն անցկացրել է Արցախի բերդաքաղաք Ծուշիում, որն ուներ բազմաթիվ կրթօջախներ, թատրոն: Ծուշիում է իր կրթությունն ստացել ապագա մեծ գրողը՝ հետագայում անընդհատ կատարելագործվելով ինքնակրթությամբ ու ընթերցանությամբ: Մուրացանը չափազանց սիրել է իր ծննդավայրը, նրա պատմությունը, հայոց պատմությունն ընդհանրապես շատ է հետաքրքրել ապագա վիպասանին , և նա 1877-ին՝ ամբողջ մեկ տարի, շրջագայում է Սյուխնքում և Արցախում, ուսումնասիրում հայոց հին հոյակապ հուշարձանները, հայկական քաղաքների ու ամրոցների պատմությունները, ազգային ավանդություններն ու սովորությունները: 1878-ին նա տեղափոխվում է «լուսավորության կենտրոն»՝ Թիֆլիս: 1881-ին նա գրում է իր առաջին գեղարվեստական երկը «Ռուզան կամ հայրենասեր օրհորդ» պատմական դրաման և «Մուրացան» կեղծանունով ներկայացնում Հայ թատրոնի վարչությանը: Պիեսը բեմադրվում է և աղմկալի հաջողություն ապահովում տակավին անհայտ հեղինակի համար: «Մուրացանն» այնուհետև դառնում է նրա գրական անունը:

Հրապուրված լինելով հայ ժողովրդի պատմությամբ՝ երիտասարդ Գրիգորը Պատմահոր «Հայոց պատմություն» -ում հանդիպում է նախարարական մի տոհմի պատմության, որ կրել է Մուրացյան, Մարացյան, Մուրացան անունը: Այս անունը շատ է հրապուրել նրան , և նա ընտրել է իբրև գրական կեղծանուն:

Կա նաև Մարիամ Թումանյանի վկայությունը, որ մանուկ Գրիգորը եղել է չափազանց խոնարհ, համեստ երեխա, և բոլոր թոռներից ու ծոռներից նա է միայն կատարել ծեր պապի բոլոր ցանկությունները, ինչի համար էլ պապը նրան անվանել է «մուրատատու խաչ»: Սա, իհարկե, չի առնչվում Մուրացան անվան հետ, պարզապես բացահայտում է գրողի անսահման սերն ու նվիրումը իր մերձավորներին և ընդհանրապես:

«Առաքյալը» վիպակը գրողը տպագրել է «Լուսն» ամսագրում 1902-ին: 19-րդ դարավերջին, կապիտալիզմի մուտքով, անասելի ծանրացավ հայ գյուղի և գյուղացու առանց այն էլ անելանելի վիճակը: Ազգության հիմքը համարելով գյուղն ու գյուղացիությանը՝ Մուրացանը չէր կարող անտարբեր մնալ քայքայվող գյուղերի ճակատագրի հանդեպ և ուղիներ էր որոնում՝ փրկելու գյուղը: Քանի որ Մուրացանը գաղափարապաշտ էր (ռոմանտիկ) , միամտորեն կարծում էր , թե առաջադեմ, զարգացած, նվիրյալ ու անձնագոհ անհատների միջոցով կարելի է կասեցնել վերահաս աղետը:

«Առաքյալը» վիպակի արծարծած հարցերը հենց սրանք են՝ առաջարկել գյուղափրկիչ ծրագիր՝ լուսավորյալ ու անձնագոհ անհատների միջոցով կրթել գյուղացուն, լուսավորություն տարածելով փոխել գյուղացու մտածողությունը,

բարձրացնել նրա կենսամակարդակը: Այդ տարիներին շատերն էին խանդավառվել այդ գաղափարներով, որոնցից մեկն էլ վիպակի հերոս, Պետերբուրգի համալսարանի ուսանող Պետրոս Կամսարյանն էր, որը ուսանողական հավաքություն ներկայացնում է իր ծրագիրը՝ խոստանալով թողնել քաղաքային բարեկեցիկ կյանքը, սիրած աղջկան ու մեկնել գյուղ: Ինչո՞ւ Առաքյալ, որովհետև Աստվածաշնչյան առաքյալների նման, պետք է տարածեր սեր ու հավասարություն, կրթություն ու կենցաղավարություն. ի վերջո՝ առաքյալ նշանակում է որևէ նվիրական առաքելությամբ ու կոչումով ծառայել վսեմ գործի: Մակայն հերոսը գյուղում մնում է ընդամենը 3 օր՝ ամենևին չհասկանալով հայ գյուղի թշվառ վիճակը, զգվելով գյուղացու կենցաղից, գոմի հարևանությամբ ու անասունների շնչով տաքացող մարդկանց ապրելակերպից: Բայց, որպեսզի իր ծրագիրը ամբողջությամբ տապալված չհամարվի, Մուրացանը նկարագրում է նաև նրա կատարած բարի գործը՝ գյուղացի Սայու ընտանիքի փրկությունը: Կամսարյանը սարսափահար փախավ գյուղից՝ ճանապարհին Աղստևի ալիքներին հանձնելով «նվիրական» ծոցատետրը՝ գյուղափրկիչ ծրագրով, որովհետև բարեկեցիկ կյանքով ապրած երիտասարդը երբեք չէր կարող ապրել այն թշվառության ու կեղտի մեջ, որի մեջ ընկղմված էին հայ գյուղն ու գյուղացին:

Իսկ թե ինչ կաներ ինքը, պիտի պատասխանի աշակերտը: Ընդունելի է աշակերտի տված ցանկացած պատասխան:

**Հայ գրականության մարզային օլիմպիադայի հարցաշարերի գնահատման  
չափանիշներ**

**9-րդ դասարան**

**1-ին հարց**

1-ին ենթահարց`	6 միավոր
2-րդ ենթահարց`	4 միավոր

**2-րդ հարց**

1-ին ենթահարց`	6 միավոր
2-րդ ենթահարց`	2 միավոր
3-րդ ենթահարց`	2 միավոր

**3-րդ հարց**

1-2-3-րդ ենթահարցեր`	2-ական միավոր
4-րդ ենթահարց`	4 միավոր

**4-րդ հարց**

1-2 ենթահարցեր`	1-ական միավոր
3-4 ենթահարցեր`	1-ական միավոր
5-6-7 ենթահարցեր`	2-ական միավոր

Յուրաքանչյուր հարց գնահատվում է առավելագույնը 10 միավոր

**Հանրապետական հանձնաժողովի նախագահ` Ս.Աբազյան**